244 «Ո՞վ հավատարիմ, իմաստուն ծառա՛,-

1. «Ո՞վ հավատարիմ, իմաստուն ծառա՛,-
Հիսուսը կասի սիրով նրան,-
Հավատքդ դու պահեցիր մինչև վերջ,
Մտի՛ր Իմ ուրախությանս մեջ»:

2. Երկրորդ գալստյանն, երբ Նա մեզ դառնա,
Իր փառքը երկրի վրա երևա,
Իր հարսին պատրաստ՝ պիտի գրկի Նա,
Նորից դեպ երկինք վերադառնա:

3. Նոր Երուսաղեմ, քաղաք սիրելի,
Սուրբ բնակարան մեր բաղձալի,
Քո փողոցներով պիտի մենք քայլենք,
Հիսուսի հետ միշտ ուրախ լինենք:

4. Էլ ո՛չ սուգ կլինի, ո՛չ էլ՝ տրտմություն,
Ի՜նչ զարմանալի ուրախություն,
Սուրբ Հոգով լեցուն հավերժ ցնծություն.
Ահա երկնային Արքայություն: